



3(361)

14.02.2014

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմաստությունն եւ գիտաբար, իմանալ զբանս հանձարոյ

ԼՍՏԱՐԱՐ

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ՄԻՇՏ ԱՐԺԱՆԻ ՀՊԱՐՏՈՒԹՅԱՄԲ

Հայրենասիրական դաստիարակությունը սկսվում է դպրոցից: Ասել է թե՛ ապագա հայրենասեր քաղաքացին ծնվելուց հետո: Իսկ փոքր ազգերի համար, որպիսին մասնաճյուղներն է, հայրենիքի հանդեպ պատասխանատվությունն ու մշտական պատրաստակամությունը գոյատևման կարևոր բաղկացուցիչ են համարվում: Հատկապես վերջին տասնամյակների մեր պատմությունը գործնականում փաստել է այս ճշմարտությունը:

Վերջերս Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում տեղի ունեցած մի միջոցառման ժամանակ մանկավարժներից մեկն այն միտքն է արտահայտել, թե Արցախյան պատերազմում հաղթանակի հասնելու գործում մեծ դեր են ունեցել 1950-1970-ական թվականներին դասավանդած ուսուցիչները: Պարզաբանելով իր միտքը՝ նա միաժամանակ հավելել է, որ հենց նրանց դաստիարակած սերունդն է ստանձնել Արցախի ազատագրման գործը և այն պատվով վարտահան հասցրել:

Անշուշտ, դեռևս վաղ է խոսել վերջնական հաղթանակի մասին, բայց հակառակորդին տևական հրադադարի պարտադրելն ինքնին կարևոր նվաճում է մեր ազգային-ազատագրական պայքարում: Եվ եթե հարգարժան մանկավարժի հնչեցրած տեսակետին մոտենանք հայրենասիրության գաղափարի մշտադրուճության տեսանկյունից, ապա կարող ենք իրավամբ ասել, որ անգնահատելի է դպրոցի դերը:

Հայրենասիրական դաստիարակությունը միայն չոր քարոզչությամբ չեն կարող ներարկել մատաղ սերնդի մեջ: Դրա համար տքմաքան աշխատանք է պետք, որի մեջ ներառվում են և՛ անհրաժեշտ գիտելիք սերմանելը, և՛ երկրի համար պիտանի քաղաքացի դաստիարակելը: Այս երկու գործոնները միասին են դրսևորվում: Եթե Արցախյան պատերազմի ժամանակ մեր ազատամարտիկները պատշաճ ուսում չլինեին ստացած, ապա հազիվ թե կարողանային արագորեն տիրապետել զինտեխնիկային, իսկ որոշ դեպքերում էլ՝ մարտական գործողությունների ժամանակ վնասված տեխնիկան վերանորոգել ու գործարկել թշնամու դեմ: Այս վերջին պարագան մուսուլման գարնացրել է օտարերկրացի շատ մասնագետների, քանզի համաշխարհային ռազմագիտության պատմությունը նմանօրինակ քիչ փաստեր ունի: Նույն կերպ հնարավոր չէր առանց լավ աշխարհագրություն իմանալու ռազմագործողությունները պլանավորելիս օգտվել տեղագրական քարտեզներից և այլն:

Միտքերը ծնվում է միայն հայրենիքն անվերապահորեն սիրելուց: Առանց իր ժողովրդի պատմությունն իմանալու, առանց հայրենի երկիրը խորապես ճանաչելու՝ դժվար թե սահմանին կանգնած զինվորը գիտակցաբար մղվի ինքնագոհության: Հայ մեծամուն պատմիչ Եղիշեի հայտնի բանաձևումը, թե՛ «Զգիտակցված մահը մահ է, գիտակցված մահը՝ անմահություն», ամեն մի հայի ծանոթ է դպրոցական տարիներից: Հայ ժողովրդի պատմությունը և հայ գրականությունն, առհասարակ, հայրենասիրության բազում հրաշալի օրինակներ ունեն, որոնք ուսուցանվում են դպրոցում՝ շնորհիվ մեր ուսուցիչների:

Եվ դա շարունակվում է նաև այսօր: Պատահական չէ, որ բանակ-դպրոց կապի ամրապնդումը համարվում է պաշտպանական և կրթական գերատեսչությունների առաջնահերթություններից մեկը: Պետության հզորացման համար հատուկ կարևորություն ունեցող այս երկու կառույցների արդյունավետ համագործակցությունը միտված է վաղվա հայրենիքի պաշտպանի ճիշտ դաստիարակությանը: Մենք ակնհայտ ենք բազմաթիվ ուսանելի միջոցառումների, որոնք պարբերաբար կազմակերպվում են թե՛ հանրակրթարաններում, և թե՛ զինվորական ստորաբաժանումներում: Այդպիսի իմացական, հոգեբանական և բարոյական նախապատրաստությունը մեզ ավելի վստահություն է տալիս, երբ ամեն անգամ գորակոչիկներին ճանապարհում ենք ծառայելու ԼՂՀ պաշտպանության բանակում: Եվ այդ կայուն վստահություն մեջ, անկասկած, շեշտված է մանկավարժի ներդրումը, որի մասին թեպետ առիթներով է ասվում, սակայն ասվում է միշտ արժանի հպարտությամբ:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ԱՐՑԱՒԸ ՈԳԵԿՈՉՈՒՄ Ե ՎԵՐՈՍԻՆ



Արցախյան գոյամարտը շատ հերոսներ ծնեց, ովքեր իրենց անձնագոհությամբ տեր կանգնեցին հայոց աշխարհին, և կայացավ փառավոր հաղթանակը: Հերոսներից շատերն ընկան ռազմի ճամփաներին ու հավերժ մնացին անմահ: Նման հավերժի ճամփորդ է ու ազգի սիրելի կերպար Պետրոս Ղևոնդյանը՝ հրամանատար Պետրոս:

Հունվարի 30-ին լրացավ քաղաքում ծննդյան 50-ամյակը, սակայն 20 տարի է, ինչ նա մեզ հետ է հոգեպես, իր հերոսացումով, իր սխրանքով ու անձնագոհությամբ: 1994 թվականի փետրվարի 14-ին Քարվաճառի Եղեգնուտ գյուղի մոտ վիրավոր ազատամարտիկին մարտադաշտից հանելու համար մարտիրոսվեց Պետրոս:

Ծնվել է 1964 թվականին, ՀՀ Նախիջի շրջանի Պոռնյան ավանում: Եղել է Շուշիի առանձնակի գումարտակի փոխհրամանատար: Հետմահու արժանացել է «Արցախի հերոս» կոչմանը, պարգևատրվել է «Ոսկե արծիվ» շքանշանով և ԼՂՀ «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանով:

Փետրվարի 10-ին Ստեփանակերտի մշակույթի և երիտա-



սարդության պալատում հանդիսավոր նշվեց հերոսի ծննդյան 50-ամյակը, որին ներկա էին ԼՂՀ Նախագահ Բակո Սահակյանը, ՀԱԵ Արցախի թեմի առաջնորդ Պարզև Արբազյանը, ԼՂՀ ԱԺ նախագահ Աշոտ Դուլյանը, վարչապետ Արա Հարությունյանը, կառավարության անդամներ, ԱԺ պատգամավորներ, զինվորականներ, հերոսի հարազատներ, մարտական ընկերներ, ռազմական վարժարանի սովորողներ, աշակերտներ, մտավորականներ... Սկզբում ցուցադրվեց ԼՂՀ

ՊԲ «Գոյամարտ» հաղորդաշարի կողմից նկարահանված ֆիլմը՝ նվիրված Պետրոսին: Ելույթ ունեցան Պետրոսի զինակից ընկերները՝ գնդապետ Դավիթ Մանուկյանը, Իգոր Սարգսյանը, ԼՂՀ զխավոր դատախազ, գեներալ-լեյտենանտ Արշավիր Ղարամյանը, ԼՂՀ փոխվարչապետ Արթուր Աղաբեկյանը: Արցախի հերոս, վարանդայի գումարտակի հրամանատար Արշավիր Ղարամյանն իր ելույթում նկարագրեց, թե ինչպես Պետրոսը նստեց շտապ օգնության մեքենան և վարելով այն՝ փորձեց մոտենալ վիրավոր զինվորին, սակայն ակամի պայթյունից մարտիրոսվեց քաջորդին: Հե-

ազատամարտիկը ես էի: Երանի չլինեք այդ պահը. գուցե Պետրոսը մնար, - ասաց Արմենը՝ շարունակելով, որ վիրահատությունից հետո իմանալով կատարվածի մասին, շատ է հուզվել, իրեն մեղավոր զգացել: Այնուամենայնիվ, Աստուծոն խնդրել է, որ իրեն որդի պարզի, որ Պետրոսի անունով կոչի: Կատարվել է Արմենի երազանքը, և բեմի վրա էր 10-ամյա որդու՝ Պետրոսի հետ, ով երգվեց նմանվել իր հերոս անվանակցին:

Միջոցառման ընթացքում Պետրոսի և Հայոց գոյամարտին նվիրված երգերով ելույթ ունեցավ ԼՂՀ ՊԲ «Ասպետ» երգչախորհրդի համույթը: Մարտական ընկերոջն իր անգուզակալ կատարումով ոգեկոչեց երգիչ-ազատամարտիկ Մկրտիչ Մկրտչյանը՝ երգելով «Գարահիսար լեռան լանջին» երգը:

2010 թվականի ապրիլի 10-ին Քաշաթաղի շրջանի Տիգրանավան գյուղի միջնակարգ դպրոցն անվանակոչվել է Պետրոս Ղևոնդյանի անվամբ: Ամուսնով ու բեմական ներկայացմամբ իրենց խոսքը ասացին այս կրթօջախի սաները՝ երգելով լինել հետնորդը քաջերի,

տերը մնալ ազատագրված հայրենիքի: Աշակերտների ելույթն ընդունվեց ծափողուններով ու ոգևորությամբ: Քաշաթաղի շրջանից ներկա էին շրջվարչակազմի ղեկավարի տեղակալ Արտուր Մխիթարյանը, կրթության բաժնի վարիչ Վարդուշ Մովսիսյանը, Տիգրանավանի Պետրոս Ղևոնդյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն Էլլա Միրզոյանը:

Ջոհրաբ ԸՈՔՈՅԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԸ ԱՐՅԱՆՅԱՆ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԻ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ

Արցախցիների գոյապայքարի ակունքները մեզ տանում են շատ ու շատ հեռու ժամանակներ, որոնցից հատկանշական են հատկապես 1918-20 թվականները, երբ դեռ Արցախ-Ղարաբաղի կարգավիճակն անորոշ էր ռուսական հեղափոխությունների հորձանում ունեցած և գտնվում էր մի նժարի վրա, որտեղ պիտի որոշվեր նրա հայկական կամ ազերական պատկանելության հարցը: Եվ ցավով, Ֆեմիդայի այդ նժարի տերերն ուրիշներն էին՝ Ռուսաստանը, Թուրքիան, Անտանտը, որոնց խաբկանքներով էլ թափուում էր Արցախ-Ղարաբաղը:

Այսօրվա մեր շարժման տարեգրությունն իր անկախության և ազատության համար Ղարաբաղի ժողովրդի այն պայքարի շարունակությունն է, որ նա սկսել է դեռ անցյալ դարի 20-ական թվականներին:

Հենց այդ զարթոնքի ժամանակ էր, որ Ղարաբաղի մտավոր ներուժը, հատկապես ուսուցչությունը կազմակերպեց Ղարաբաղի ժամանակավոր կառավարությունը և ստեղծեց Ազգային խորհուրդը՝ որպես Ղարաբաղի կառավարման մարմիններ, որի հետ հաշվի մատեցին ոչ միայն Ադրբեջանի և Հայաստանի բուրժուական կառավարությունները

(մուսավաթները և դաշնակները), այլ և Անտանտի էմիսարները:

Այդ հին օրերի պատմությունը զուգահեռաբար կրկնվեց նորօրյա պայքարի պարագայում, բայց՝ այլ տեսիլքներով: Բայց որ պայքարի շարժիչ ուժը մտավորականությունն էր, հատկապես ուսուցչությունը, փաստ է: Այսպես, 1919 թվականին Հաղորթ գյուղի ուսուցիչ Ստեփան Ստեփանյանի՝ Անգլիայի էմիսար Շատելվորտի երեսին շարժած այն բառերը, թե՛ «Ես տասը տղա ունեմ, որոնք պատրաստ են իրենց գեներալով պաշտպանել Ղարաբաղը Ադրբեջանի հարձակումներից և ես ոչ մի դեպքում իմ պատգամավորական դիրքերը չեմ զիջի, իմ ժողովրդին տված խոստումները չեմ դժոխ ու համաձայն եմ Ղարաբաղը միավորել միայն մայր Հայաստանի հետ և ոչ ձեր պահանջած Ադրբեջանի», իր «թերով» հասավ Շուշիի Բերդաձորի եմբարշտանը և նրա ուսուցիչ Առնո Մկրտչյանին զինեց նույն գաղափարներով ու դեռ ավելին՝ հայրենի օջախի պաշտպանության գործը վերցնել իր ուսերի վրա, դիմագրավել Շուշիի և Բաքվի բանտային բոլոր կտտանքներին, ցուցաբերել տուկունություն ու խիզախություն:

Անհողողող կամք և արծալային հեռատեսություն ունեցած այդ երիտասարդ ուսուցչի մասին բավական է լսենք նրա բանավախի ընկերներ, ուսուցիչ Եմիլ Բալայանի և Յուրա Դանիելյանի պատմածները, որ մեկնաբանվել են «Ազատ Արցախի»-ում, տարիներ առաջ (1995թ.), որպեսզի լրիվ գաղափար կազմենք նրա մասին: Նա կռահում էր մեր ազատ ու անկախ ապագան և ասում. «Չեմ վախենում, բայց ափսոսում եմ, որ անկախությունը չեմ տեսնելու: Ես գուցե ոչ, բայց դուք կտեսնեք և մեզ չնոռանաք»:

Ասում են, այս ուսուցչի հայրենասիրությունն ու նվիրվածությունը դրսևորվել էին դեռևս ուսանողական տարիներին, երբ Գորիսում ուսանողների ցույցի առջևից խրոխտ ընթանում էր որոշը ձեռքին, որի համար բանտարկվել է:

Հաղորդակցի խիզախ ուսուցիչ Ս. Ստեփանյանի ծայրի դողանքները ծայր ծայրի տալով, 70 տարվա հեռավորությունից հասավ քաղաքամայր Ստեփանակերտի մայր բուհ և քաղաքական զգաստության բերեց նրա դասախոսական կազմին, որոնցից նույնիսկ որոշ կանայք դարձան Արցախյան պայքարի մուսուլմաններ:

3

«ՈՌԻՍԱԿԱՆ ԱՐՋՈՒԿ»

ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ԽՐԱԽՈՒՄՎԵՑԻՆ

Հունվարի 31-ին ԼՂՀ կրթության և գիտության նախարարության նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Ռուսական արջուկ, լեզվաբանություն բոլորի համար» մրցույթի մրցանակների հանձնման արարողությունը: Հիշեցնենք, որ մրցույթն անցկացվել էր անցյալ տարվա նոյեմբերին, և կարգի համաձայն, մրցանակաբաշխությունը նախատեսված էր 2014-ին հունվարի 29-31-ը և փետրվարի 3-4-ը՝ ՀՀ 12 քաղաքներում և Ստեփանակերտում: Մրցանակները հանձնեց «Ռուսական արջուկ» և «Կենդուրու» մաթեմատիկան բոլորի համար» մրցույթներն իրականացնող «Այբ» կրթական ծրագրերի ղեկավար Շուշան Կարապետյանը: Ներկա էին մրցույթի մասնակից մայրաքաղաքի դպրոցների տնօրեններ և ուսուցիչներ, հաղթած աշակերտները, նրանց ծնողները: Ողջույնի և շնորհավորանքի խոսք ասաց ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը. «Ռուսական արջուկ» մրցույթը կարևորվում է այն առումով, որ բացահայտվում է, թե ինչ խորությամբ են դպրոցներում ուսումնասիրում ռուսաց լեզուն, որը թեպետ դասվում է օտար լեզուների շարքը, սակայն, ըստ էության, այդպիսին չէ և մայրենիից հետո հաղորդակցության, տեղեկատվական աղբյուրներից օգտվելու և ընդհանրապես, միջամշակույթի հարաբերությունների ամենատարածված լեզուն է, որը սիրում, հաջողությամբ ուսումնասիրում են ԼՂՀ հանրակրթական հաստատություններում, ինչի մի առի-



վատյան լեզվաբանական զանգվածային մասնական այդ շարժմանը Արցախին միանալն է»: Ս. Ասրյանը նաև շնորհակալություն հայտնեց Շ. Կարապետյանին՝ արցախցի երեխաների մտավոր կարողությունների բացահայտման ուղղությամբ շա-

կավար Ս. Ասրյանի՝ «Այբ» կրթական հիմնադրամի նախաձեռնություններին՝ Արցախում իրականացմանն աջակցելու համար: Ինչպես հայտնի է, 2011թ. «Այբ»-ի և ԼՂՀ ԿԳՆ-ի միջև կնքվել է համագործակցության ծրագիր, որի շնորհիվ «Կենդուրու»

տոնապես նրան միացել է 2011-ին, և արդեն երեք տարի այն անցկացվում է նաև Արցախում: Ընդհանուր առմամբ, շուրջ 2,5 մլն մասնակից ունի: Հայաստանից 2013-ին մասնակցել է 2-12-րդ դասարանների 8755 երեխա՝ հանրապետության 305 դպրոցներից, շուրջ 1000 մասնակցով ավել՝ նախորդ տարվա համեմատությամբ: Արցախից մասնակցել են Ստեփանակերտի 13 դպրոցները՝ 446 դպրոցականների ընդգրկմամբ: Շ. Կարապետյանի տեղեկատվությամբ՝ առայժմ միայն քաղաքային դպրոցների երեխաներն են մասնակցում՝ ի տարբերություն «Կենդուրու»-ի, որին նաև շրջաններն են ընդգրկվում:

Մասնակիցներից 425-ը արժանացել են մրցանակի, որոնցից 130-ը՝ պատվոգրի: Արցախից մրցանակի արժանացել են 16-ը, որոնցից 4-ը՝ պատվոգրի: Շ. Կարապետյանի տեղեկացմամբ՝ այս մրցույթում չորս տարվա ընթացքում դեռևս հաղորդ չի եղել, որը համարվում է նա, ով բոլոր առաջադրանքները ճիշտ է լուծել, դրանցից մեկը կամ չի լուծել, կամ սխալ է լուծել: Պատվոգրի արժանանում է միավորների որոշակի շեմը հաղթահարած մասնակիցները, իսկ հատուկ մրցանակ ստանում են տվյալ դպրոցի մասնակիցների մեջ ամենաբարձր միավորներ հավաքած աշակերտը: Այսինքն՝ բոլոր մասնակից դպրոցները մրցանակակիր ունենում են: Իսկ բոլոր մասնակիցները որպես խրախուսում ստանում են հավաստագիր: «Այբ» ծրագրի ղեկավար Շ.

Կարապետյանը, հանձնելով հավաստագրերն ու մրցանակները, շնորհակալություն հայտնեց նաև դպրոցի տնօրեններին, որոնց աջակցությամբ տեղում իրականացվում է գործընթացը: Ի դեպ, «Այբ»-ի կողմից Ուսուցչի օրվա նախօրյակին շնորհակալագրեր են ստանում մրցանակակիր աշակերտների ուսուցիչները՝ իրենց քրտնաջան աշխատանքի համար:

Շ. Կարապետյանը յուրաքանչյուր դպրոցի ներկայացուցչի հանձնեց նաև 2014թ. «Կենդուրու» մրցույթի անցկացման հրավերի փաթեթը՝ տեղեկացնելով, որ այն կանցկացվի մարտի 27-ին: Ծրագրի ղեկավարը մի ուրախալի լուր էլ հայտնեց. այս տարի նման մրցույթ կանցկացվի նաև հայերենից: Մտադիր են ընդլայնել առարկաների շրջանակը:

Ավելացնենք, որ պատվոգրի արժանացած արցախցի չորս դպրոցականները որպես նվեր ստացան նաև «Ռուսական արջուկ»-ի խորհրդանշանով պայուսակներ: Ի դեպ, մրցանակակիրների մեջ ծրագրի ղեկավարը ճանաչեց նրանց, ովքեր նաև «Կենդուրու»-ին են մասնակցել և լավ արդյունքներ ցուցաբերել:

«Այբ»-ի կայքում տեղադրված են նախորդ տարիների մրցույթների առաջադրանքներն ու դրանց լուծումները: Ցանկացած դպրոցական ինքնուրույն կարող է պարապել և հարստացնել իր գիտելիքները:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԸ ԱՐՃԱՄՅԱՆ ԳՈՅԱՂԱՅՔԱՐԻ ԱՎՈՒՆՔՆԵՐՈՒՄ

1 Երանցից Լեւոն (Հեղինե) Գրիգորյան դասախոսը, ով, իր ասելով, «վաղ էր կոտցել խայծը», դեռ Շարժման արշալույսին ընդառաջ գնալով Ասկերանի շրջանային «Կարմիր դրոշ» թերթի խմբագիր՝ իր ամուսին Կոմիտաս Դանիելյանի հորդորներին, 1987թ. նախաձեռնեց Արցախը մայր Հայաստանին վերամիավորելու համար Արցախի մանկավարժական ինստիտուտում ստորագրահավաքը՝ իհարկե, առաջինն ինքը դնելով իր ստորագրությունը: Այսուհետ՝ նրա այդ հանդուգն քայլին ի պատասխան՝ դասախոսներից Համլետ Գրիգորյանը և Համլետ Մովսիսյանը ողջունել են նրան և ասել. «Որ դու կին տեղովդ այդ վտանգավոր քայլը քեզ վրա ես վերցրել, մենք մեր տղամարդ տեղովն ինչո՞ւ պիտի վախենանք ստորագրելուց»:

Ավանդին ավելացնենք, որ Արցախը Հայաստանին վերամիավորելու մասին արգելված թեմայով առաջին հոդվածը «Սովետական Ղարաբաղ» թերթում առաջինը հրատարակվել է նույն Լեւոն Գրիգորյանի, Համլետ Գրիգորյանի և Արզիկ Մխիթարյանի ստորագրությամբ, 1988թ. մարտի 15-ին (իհարկե՝ թերթի խմբագիր Մաքսիմ Հովհաննիսյանի խիզախումով):

Մեր Շարժման առաջամարտիկի դերում գտնված և իր հուսադրող ելույթներով արցախցիներին ոգևորող պրոֆեսոր Արզիկ Մխիթարյանը համալսարանի բոլոր այդ դասախոսների դերն այնքան շոշափելի է համարում, որ դարաբաղցիները նրան նույնպես դասում են Շարժման առաջամարտիկների շարքը: Նա գրում է, որ Շարժման առաջին օրերից հենց նրանք էին, որ օժնակականների զենքի տակ հանրահավաքներ էին անում և Մոսկվա բողոք-ուղերձներ պատրաստում ու նախապատրաստվում սպասվելիք զինված ընդհարմանը:

Շարժման թե՛ ակունքներում և թե՛ ընթացքում ճշացող դեր է ունեցել բուհի անվանի դասախոս, մ.գ.թ., դոցենտ Համլետ Գրիգորյանը, որի կատարածը քաղաքական հասցադուլից մինչև երեք բանտարկությունների վերջը լի է բազմաթիվ հանդուգն քայլերով: Ի դեպ, նրա

ծերբակալությունները և ԽՍՀՄ մոտակա և հեռավոր բանտերում նրան կտանքների ենթարկելն ամեն անգամ կապված է եղել որևէ քաղաքական իրադարձության հետ՝ եղեռնի տարելիցի, ՀՀ ԱԺ նիստերին մասնակցելու, «Կոլցո» ռազմագործողությունների անցկացման և այլնի հետ: Եվ լավ է, որ նա իր կյանքի այդ շրջանն ամփոփ կերպով ներկայացրել է անզնահատելի մի հուշագրում:

Դրվատանքի արժանի գործերի հեղինակներ էին նաև Ռոման Բալայան, Սոկրատ Խանյան, Կարեն Արամյան, Արկադի Թովմասյան, Գրիգորի Աֆանասյան դասախոսները: Վերջինս՝ Գրիգորի Աֆանասյանը, դեռևս 1989թ. մայիսի 21-ին Մոսկվայի Լուծմիկիում տեղի ունեցած մի հանրահավաքում, որին մասնակցում էր շուրջ մեկ միլիոն մարդ, Բ. Ելցինից և ակ. Սախարովից հետո երրորդ ելույթ ունեցողն էր՝ որպես Արցախի ազատագրական պայքարի առաջամարտիկ և Ղարաբաղյան շարժման ակտիվիստ: Նա այն օրերին շրջում էր ԽՍՀՄ տարբեր տարածաշրջաններում՝ Արցախյան դատը խորհրդային հասարակությանը ներկայացնելու պատվաբեր ու ծանր առաքելությամբ: 1988թ. փետրվարի 13-ին, երբ Շարժումը դեռ չէր մտել իր հունի մեջ, Ստեփանակերտի 5-7 հազարանոց առաջին հանրահավաքում Գ. Աֆանասյանը առաջինը ելույթ ունեցավ և առաջին անգամ պահանջեց Բաքվի դրածո Կևորկովի հրաժարականը, իսկ երբ ադրբեջանական օժոնը հարձակվեց Արցախի վրա, զենքը ձեռքին, մասնակցեց մարտերին:

Իսկ մի՞թե պակաս նշանակություն ունեն ինստիտուտի դասախոս-պատմաբաններ Ստեփան Դադայանի, Շահեն Աբրահամյանի և Նիկոլայ Ավագիմյանի համահեղինակությամբ գրված պատմական հոդվածները մարզային թերթում, որով արցախահայությունը ծանոթացել է պատմական ակունքներին, նրա անցյալին և հուսադրվել:

Նրանց այդ քայլերով է ընթացել նաև նորոյա պատմաբան-դասախոս, դոցենտ Վահրամ Բալայանը, ով Քալբաջարի տեղ մեզ բերել է Վայկունիք-Քարվաճառ, բացահայտել

Տիգրանակերտի պատմությունը:

Մեր Շարժման կիզակետում գտնված՝ այդ Շարժման իր ընտանիքով մեծ թափ հաղորդած գիտնական մանկավարժ, Արցախի մանկավարժական ինստիտուտի ռեկտոր աշխատած Արպատ Ավանեսյանը այդ օրերին նախաձեռնեց Կիրովականի մանկավարժական ինստիտուտի Արցախի մասնաճյուղը դարձնել համալսարան:

Նախորդ դարի Ղարաբաղյան շարժման ռաիվիրա ուսուցիչներ Արշավիր Քամայանը, ով հետագայում խորհրդային իշխանության առաջին տարիներին դարձավ Ղարաբաղի առաջին լուսժողովուրդ, Ալեքսանդր Ծատուրյանը, Լևոն Վարդուհին ու Շավարշ Վարդուհին, Արամ Կիսիբեկյանը, Արամ Բաղդասարյանը, Սամվել Գրիգորյանը, Արմենակ Բեգլարյանը և ուրիշներ, անկախ իրենց կուսակցական պատկանելությունից, մուսավաթների դեմ արցախցիների պայքարի ջանք հասցնում էին գյուղերը և վարում նրանց պայքարի ջանքը, հանդիսացան նաև 1988-ի մեր մանկավարժների կրակօջախը, որոնց օրինակով Ամարասի հովտում, Տողասարում և Իշխանագետի ենթաշրջանում, Ասկերանում և Մոռվի տարածքներում երբեմնի խոհեմ ու համեստ ուսուցիչը զենք վերցրեց և գիտակցված զենք մահվան ընդառաջ: Հենց այդպիսի գիտակցված նվիրվածությամբ մահվան ընդառաջ գնացին ուսուցիչ Վիգեն Վրեժը՝ Տողի ենթաշրջանի կամավորների շտաբի պետը, ուսուցիչներ Սամվել Գրիգորյանի և Արև Թամրազյանի որդին, Երվանդ Ղահրամանյանը՝ Բանագործի միջնակարգ դպրոցի նախկին տնօրենը, որն իր ստեղծած պատմաերկրագիտական թանգարանի պահպանության հոգսերով էր տարված Ադրբեջանի օժոնի ներխուժման օրերին, որի մասին հետո գրքեր գրեց, իսկ Ջրակուսի դպրոցի տնօրեն Մելիք Մելիքյանը և Շեխերի ուսուցիչ Գավրիլ Միրզոյանն իրենց սեփական արհեստանոցներում տարբեր տեսակի զենքեր էին պատրաստում:

Շարժման ակունքներում հանդես եկած մի խումբ ուսուցիչներ (Ջ. Մարտիրոսյանը՝ Նորադյուղից, Սլավա Առուշանյանը՝ նախկին ուսուցիչ) Ասկերանից, Իվան Աթայանը՝ Ավե-

տարանոցից, Գրիգոր Ուլուբաբյանը՝ Մարտունուց և մյուսները դարձել էին Շարժման մուսուխիկներ և Ղարաբաղցիների բողոքի ձայնը հասցրել ԽՍՀՄ Կենտկոմ և կառավարություն:

Հեռու-հեռուներից եկած մեր հայրենասեր նախկին մանկավարժների ձայնն ունենողի եղան Ղարաբաղի նոր ժամանակի շատ երիտասարդ ու տարեց ուսուցիչներ, որոնցից Նորայր Դանիելյանը (Մարտակերտի պաշտպանական շրջանի հրամանատար), Վլ. Խաչատրյանը (գնդի հրամանատար), Արմեն Մելքունյանը (Մաճկալաշեն-Մոսի գումարտակի հրամանատար), Մերուժան Մոսիսյանը (Մարտունու գումարտակի հրամանատար), Սլավա Գրիգորյանը (Տողի ենթաշրջան), Սլավա Մուսայելյանը (Ճարտարի վաշտի հրամանատար), Հովիկ Գրիգորյանը (Բերդաշենի պաշտպանության մասնակից), որոնց հիշատակի առթիվ վերջերս գիրք է գրվել, Շարժման ակտիվ մասնակիցներ Արամ Բալայանը (Մոս), Եմիլ Բալայանը (Աշան), Կամո Գրիգորյանը (Մուշկապատ) և բազմաթիվ մեր նահատակված ուսուցիչները, որպես երկրամասի ինքնապաշտպաններ, հայրենի հողի վրա կանգնել են՝ ինչպես խաչքարեր, ամուր՝ ինչպես հավատը, անձախ՝ ինչպես պատիվը:

Այդ նահատակ ուսուցիչներից Ղազանչիի դպրոցի տնօրեն, հինգ երեխաների հայր Պավել Ասատրյանի այն խոսքերը, թե՛ «Եթե անգամ աշխարհակործան փոթորիկները փորձեն մոտենալ Ղազանչի գյուղին, ապա մի հրաշքով ես կկերպարանափոխվեմ հզոր, կախարդական մի ուժի, որ անասան կպահի գյուղն իմ հայրենի», մինչ օրս էլ թևավոր խոսքեր են մեզ համար: Հապա ուսուցչուհի Ալիսան՝ կիչանցի, որ ասել է. «Կենդան, բայց գյուղս թշնամուն չեմ տա» կամ՝ մարտեցի ուսուցչուհի Ալվինան, որ իրեն տանջամահ անող թուրքերի երեսին շարտել է. «Միևնույն է, մերոնք կզան և կազատագրեն գյուղը», որպես հուսադրող խոսք, հոգեկան սնունդ են դարձել գյուղերի բնակչության անկտորում կամքի համար:

Սիջայե ԲԵՂԱՐՅԱՆ
ԼՂՀ վաստակավոր մանկավարժ

ՄԱՐԴԸ ԵՎ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Էկոլոգիան ապագայի գիտություն է, որն ուսումնասիրում է կենդանի օրգանիզմի և շրջակա միջավայրի փոխազդեցությունները և դրանց օրինաչափությունները, որի զարգացման առաջընթացից է կախված մարդու գոյությունը Երկիր մոլորակի վրա:

«Էկոլոգիա» արտահայտությունը առաջին անգամ օգտագործել է գերմանացի գիտնական Էռնեստ Հեկելը, 1866 թվականին: «Էկոլոգիա» բառը ծագել է հունարեն «օլոս»-տուն և «լոգոս»-գիտություն բառերից:

Հասարակության զարգացման տարբեր դարաշրջաններում շրջակա միջավայրի վրա մարդու ազդեցությունը տարբեր է եղել: Պահպանելով բնությունը՝ մենք պահպանում ենք ինքնբերական մեծ և մեր սերունդների շահերը: Մարդը բնության մի մասն է: Նա իր գործունեությամբ հազարավոր թելերով կապված է բնության հետ՝ ստեղծելով բնապահպանական կրթության մի ամբողջ համակարգ, առողջ և մաքուր շրջակա միջավայր ունենալու խնդրով: Բնապահպանական խնդիրները վերաբերում են բոլորին, և՛ փոքրերին, և՛ երիտասարդությանը, և՛ մեծերին:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներից մեկը բնապահպանական աշխատանքի ձևավորումն է, որը պետք է իրականացվի կրթական համակարգի բոլոր օղակներում: Այս շղթայում առաջին օղակը նախադպրոցահասակ երեխաների էկոլոգիական դաստիարակությունն է: Այն թերևս ամենակարևորն է, քանզի ամենավաղ տարիքում են ձևավորվում մարդու հիմնական արժեքներն ու բարոյական նորմերը, որոնք էլ հետագայում բնության և շրջապատի նկատմամբ ճիշտ վարքագծի հիմք են դառնալու: Յուրաքանչյուր երեխա ծնված օրվանից կապված է իրեն շրջապատող մարդկանց ու բնության հետ: Բնության տարբեր երևույթների ուսումնասիրությունները զարգացնում են երեխայի ընդունակությունները, իսկ համապատասխան գիտելիքների առկայությունը երեխաների մեջ ձևավորում է էկոլոգիական մտածելակերպ:

Բնության հանդեպ սերն ինքն իրեն չի ծնվում, դրա համար էլ երեխաներին անհրաժեշտ է մեծահասակների զգացական-գործնական կոնկրետ նկարագիր և ճիշտ վարվելաձև նախադպրոցական տարիքից: Դա կարող է կանխել սխալ և կոշտ վերաբերմունքը: Էկոլոգիական գիտելիքներով զինված բնաչնչություն ունենալու համար պետք է ապահովել մեր երեխաների էկոլոգիական դաստիարակությունը մանկուց: Նախադպրոցական տարիքի երեխաների էկոլոգիական կրթության գործընթացը իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել «Ճանաչի՛ր, սիրի՛ր, պահպանի՛ր» կարգախոսով: Այսպես կծանրվի այն գիտակցությունը, որ շրջակա աշխարհում ամեն ինչ սերտորեն փոխկապակցված է, բնության մեջ յուրաքանչյուր տարր պայմանավորված է մյուսի գոյությամբ: Էկոլոգիական դաստիարակության նպատակն է ամբողջ մոլորակի և հարազատ երկրի շահերն ու ապագան հետագայում պաշտպանելու կոչված փոքրիկ քաղաքացու ձևավորման գործը: Այն երեխայի մեջ ձևավորում է ճանաչողական, բնապահպանական գիտելիքներ, հոգատար, մարդասիրական վերաբերմունք, բնության մեջ ճիշտ վարքագծի դրսևորման սովորություններ և հմտություններ:

Նախադպրոցական կրթության ծրագրի «Էկոլոգիա» բաժնում հստակ տեղ է հատկացված բույսերի և կենդանիների մասին երեխաների պատկերացումներին, շրջապատում հանդիպող ծառերին (ուռենի, լորենի, բալենի, խնձորենի), բնության եղանակներին բնորոշ փոփոխություններին, օդի, ջրի, հողի առանձնահատկություններին, բնության նկատմամբ հոգատար վերաբերմունքի և գեղեցիկը տեսնելու ընդունակության մասին: Ծրագիրը կառուցված է այնպես, որ ապահովվի նախադպրոցականի էկոլոգիական դաստիարակության թեմաների հաջորդականությունը: Երեխաների շփումը բնության օբյեկտների հետ նրանց մեջ ձևավորում է բնության նկատմամբ հա-

պես են իրենք վերաբերվում բնությանը, որքան պետք է սիրեն, փայփայեն այն համընդհանուր տունը, որտեղ ապրում է ողջ մարդկությունը:

Երեխաների համար առողջարար, դաստիարակչական և զարգացնող նշանակություն ունեն հաճախակի անցկացվող էքսկուրսիաները և զբոսանքները: Էքսկուրսիայի ժամանակ երեխաները հնարավորություն ունեն տեսնելու բույսերը և կենդանիներն իրենց բնակության միջավայրում: Բնության գեղեցկությունը երեխաների մեջ արթնացնում է խոր վերապրումներ, նպաստում նրանց գեղագիտական զգացմունքների դրսևորմանը, բնության բազմազան երևույթները դիտելու և ընկալելու կարողությանը զարգացմանը: Զբոսանքի ժամանակ կազմակերպվում են տարաբնույթ խաղեր բնական նյութերով (ավազ, կավ, ջուր, ծյուն, տերևներ, կոնքեր և այլն): Դրա հետևանքով երեխաների մեջ առաջանում է հետաքրքրություն՝ բնության առարկաների և երևույթների, էկոհամակարգերի վերաբերյալ հարցեր տալու և պատասխաններ ստանալու: Դիտումները, բնապահպանական բովանդակությամբ խաղերը, հեքիաթները, մանկական տարբեր ստեղծագործությունները, մանկապարտեզում կանաչ գոտիների ստեղծումը, հայրենի բնությունը գովերգող տոնահանդեսները, ծաղկի, բերքի, աշնան տոները, էկոլոգիական ուղղվածությամբ սպորտային զվարճալի միջոցառումները յուրաքանչյուր երեխայի մեջ ձևավորում են խոր անվերջ, ճշմարտացի վերաբերմունք բնապահպանության գործում: Առանձնապես հատուկ նշանակություն է տրվում պարապմունքներին և ազատ ժամերին անցկացվող խաղերին, որոնց ընթացքում երեխաներին հնարավորություն է տրվում ազատ արտահայտելու իրենց մտքերն ու կարծիքները: Այսպիսի միջոցառումների իրականացումը դաստիարակից պահանջում է հետևողականություն, համբերություն և տակտի դրսևորում: Դրանք մեծ ազդեցություն են թողնում երեխաների բնապահպանական դաստիարակության վրա՝ հիմք դնելով էկոլոգիական մշակույթի ձևավորմանը:

Էկոլոգիական օրենքների իմացությունը, բնական պաշարների խելամուծ օգտագործումն ու ապահովումը մարդկային հասարակության կարևորագույն հիմնախնդիրներն են: Սեզանից յուրաքանչյուրը պատասխանատվության իր բաժինն ունի և համատեղ ջանքերով կարող է լուծել էկոլոգիական մի շարք հիմնահարցեր: Մարդուն շրջապատող բնությունն ու կենդանական աշխարհն անջափ հետաքրքիր են, գրավիչ, սիրելի և օգտակար: Պետք է երեխաներին ցույց տալ ամեն ինչ՝ ծառ ու ծաղկից մինչև բնապատկերները, ամպերն ու գիշերվա մութի մեջ թաթրող աստղերը, արևն ու երկինքը:

Զարմանահարաշ է այս աշխարհը: Զարմանահարաշ է մեզանից յուրաքանչյուրը: Նայի՛ր թո շուրջը, փոքրիկ, փորձիչ հարկանալ կատարվող բոլոր փոփոխությունները, փայփայի՛ր թո փոքրիկ մոլորակը, հոգ տար նրա մասին, պայքարի՛ր ներդրումդ մեր ապագայի ամեն ինչի դեմ և մի թող, որ թեզ խնդիր ծառը:

- Մի կտորատիր ծյուղերն իմ, Որդիներն են նրանք իմ հեզ, Ին այնպես են սիրում նրանց, Ինչպես մայրը սիրում է թեզ: Տերև անգամ եթե պոկես, Սիրտս ցավից կնդկտա, Թե որ դու ինձ չպահպանես, Պատրաստի ծառ թեզ ո՞վ կտա:

Կարինե ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՀՀ ԿԳՆ ԿԱԻ ԼՂՀ
մասնաճյուղի նախադպրոցական կրթության մասնագետ

Շնորհավորանք

ՃԵՄԱՐԻՏԵ ՈՒ ԱՉՆԻՎԸ ՆՐԱ ԿՅՈՒՆԻ ՄՇԱԿԱՆ ՈՒՂԵԿԻՅՆԵՐՆ ԵՆ



Մարդկային կյանքը նման է լեռնապարի, որի յուրաքանչյուր բարձունք մի նոր ձեռքբերում է, իսկ վիհերն ու կիրճերը՝ ժամանակավոր դժվարություններ ու խոչընդոտներ, որոնց հաղթահարումն էլ հենց իմաստավորում է հաղթանակի բերկրանքը:

Յուրաքանչյուր ձեռքբերում և գագաթ պայմանավորում է նաև հետադարձ հայացք, որը գնահատում է այն ամենը, որ կոչվում է կենսագրություն:

Այսպիսի մի գագաթ է Գրետա Բարսեղյանի կյանքում՝ 60-ամյա տարեդարձը, որին նա հասել է որպես մեր հասարակության ապագա դիմագիծը կերտող անխնայ մշակ, որպես շրջապատի հարգանքը վայելող ուսուցիչ:

Ծնվել է 1954թ. փետրվարի 7-ին, Ասկերանի շրջանի Սարդարաշեն գյուղում: 1968-72թթ. սովորել է Շուշիի մանկավարժական ուսումնարանում, իսկ 1978-ին ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի լեզվագրական բաժինը: Աշխատել է ԼՂՀ տարբեր դպրոցներում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի: 2009-ից նա կանգնած է ավագ դպրոցի կայացման և բարգավաճման ճանապարհին:

Տարիները լցրել են հիշողության էջերը, և Գ. Բարսեղյանը այսօր իր վաստակի լիիրավ տերն է, վաստակ, որի մեջ ամփոփված են փորձ, հպարտություն, երախտագիտություն, հարգանք, նվիրում և սեր:

Համեստ և կենսասեր անձնավորություն է Գ. Բարսեղյանը, ճշմարիտն ու ազնիվը նրա կյանքի մշտական ուղեկիցներն են, իսկ հուժկուն ու ծիծաղն ամենուր համեմուն են նրա առիթընդ խոսքը:

Մանկավարժական գործունեության երկար տարիների ընթացքում նա իր գիտելիքներն ու փորձը, նպատակներն ու եռանդն ի սպաս է դրել մեր հասարակությանը արժանի քաղաքացիներ դաստիարակելուն: Տիկին Բարսեղյանի սաներն իրենց ուսուցչուհուց սովորում են դրսևորել ամուր կամք և ոգու ուժ, մաքուր պահել մայրենին և կյանքի նշանաբան դարձնել հույսը, հավատը, սերը:

Ուսուցչուհու ոչ միայն գիտելիքները, այլև անձնական օրինակը կարևորում են նրա կատարած աշխատանքը: Աշխատասիրությամբ, պարտաճանաչությամբ և հետաքրքիր մտա-հղացումներով նա այսօր էլ ոգևորում ու զարմացնում է իր սաներին, տանում իր հետևից գիտելիքների դժվարահաղթ բավիղներն ի վեր:

60-ամյա հոբելյանի առթիվ մեր գործընկերոջը մաղթում ենք առողջություն, նոր եռանդ և հաջողություններ:

Ստեփանակերտի Վ. Ջիանգիրյանի անվան հ. 11 ավագ դպրոցի հայոց լեզվի և գրականության առարկայական հանձնախումբ

ԳՆԱՅՍՎԱԾ ՍԵՐՈՒՆԳՆԵՐԻ ԿՈՂՄԻՉ



Յուրաքանչյուր պետության հիմքը դպրոցն է, իսկ լավ կրթությամբ կայացնում է նվիրյալ ու բանիմաց մանկավարժները: Կան մանկավարժներ, որոնց կյանքի իմաստը իրենց մասնագիտությունն է:

Գաղտնիք չէ, որ ով սիրում է իր մասնագիտությունը, հոգով և սրտով նվիրվում է իր աշխատանքին: Կյանքում միշտ որոնող, պրպտուն ու անհանգիստ, մանկավարժության նվիրյալ է մեր այսօրվա հոբելյարը:

Վալիդա Օհանյան: Ծնվել է 1954թ. փետրվարի 19-ին, Բաքու քաղաքում: Մեծացել է ազնիվ մի ընտանիքում:

1972թ. սկսվել է նրա մանկավարժական գործունեությունը. 40 տարի անընդմեջ աշխատել է Ակնաբլուրի միջնակարգ դպրոցում՝ որպես ռուսաց լեզվի մասնագետ:

Վալիդա Օհանյանը բանիմաց, պատասխանատու ուսուցչուհի է: Խստապահանջ է նախ իր նկատմամբ: Նրա խստապահանջությունն աշակերտին մղում է պատրաստվելու դասին, սովորեցնում է լինել պատասխանատու:

Նա չի պատկերացնում իր կյանքն առանց դպրոցի ու աշակերտների: Աշխատում է նվիրումով: Դասերը բացատրում է մատչելի, երեխաներն ուղղակի սիրահարված են նրա արտաստիզմին:

Վալիդա Օհանյանը համարում է, որ իր երկար տարիների վաստակն իր աշակերտներն են, որոնք, ցրված Արցախի, Հայաստանի ու արտերկրի տարբեր վայրերում, աշխատում ու բարիքներ են արարում, երբեմն հիշում իրենց ուսուցչուհուն ու տարբեր առիթներով շնորհավորանքներ ուղարկում հեռվից՝ ի նշան երախտագիտության: Իսկ ինքն էլ մտքի բոլոր թելերով կապված է իր սաների հետ: Տարիների հոսքի հետ այդ կապերն ավելի են ամրանում՝ դառնալով հանգստյան:

Ծննդյան 60-ամյակի կապակցությամբ շնորհավորում ենք մեր սիրելի ուսուցչուհուն, մաղթում առողջություն, հաջողություններ, բարեկեցիկ կյանք:

Մալի ու բարու սերմնացանի կյանքի ճանապարհը թող հարատև լինի, նրա լուսավոր կյանքում երջանիկ ու արևոտ օրերը թող հերթազայեն իրար երկար, շատ երկար...

Ասկերանի շրջանի Ակնաբլուրի Վ. Ջիվանշիրյանի անվան միջնակարգ դպրոցի ուսուցչական կոլեկտիվ

ԿՐԹՕՋԱՆ

ՇԱՆՈՒԱՅԻ ԱԶԱՓՆՅԱԿ

Շալուան Հակարհի հյուսիս-արևելյան մեծ վտակն է, որի ավազանում են գտնվում Քաշաթաղի շրջանի մի շարք բնակավայրեր: Գետի աջակողմյան սարահարթում, որը հասնում է մինչև Հոջանցի ձախ ափ, կա չորս համայնք՝ Գողթանիկ, Գանձա, Դրախտաձոր և Դազարապատ: Փետրվարի 6-ին այցելեցինք նշված համայնքները՝ մասնակից լինելու համայնքների ղեկավարների հաշվետվությանը: Սրանցից Դազարապատը՝ նախկին Ալիդուլին, հայտնի է իր հերոսական ու դրամատիկ անցյալով: Չնայած տարածքի հայաթափմանը, 18-րդ դարից սկսած, այս գյուղը հայկական է մնացել մինչև 1918 թվականը: Բերձորից դեպի Քարվաճառ ձգվող ճանապարհի մոտ 20-րդ կիլոմետրից քեթվում ենք ձախ, և սկսվում է վերելքը դեպի Դրախտաձոր: Անցնում ենք ևս մոտ 25 կմ և հասնում, ինչպես տեղացիներն են ասում, աշխարհի վերջը: Մինչև գյուղ հասնելը՝ մոտ 15 կմ ճանապարհը ձգվում է արդեն Հոջանց գետի ձախակողմյան բարձրաբերձ ու գեղատեսիլ ափամերձ տարածքով: Այստեղ պահպանվել է հնադարյան մի ամրոցատեղի: Դրախտաձորը գտնվում է ավելի ցածրադիր ծորակում՝ հասնելով մինչև Հոջանցի ժայռակերտ ափ: Միջնադարում և ավելի վաղ այստեղով է անցել Մեծ Հայքի Սյունիք և Արցախ աշխարհներն իրար կապող ճանապարհներից մեկը: Այդ են վկայում Հոջանցի վրա պահպանված քարե կամարակապ երկու կամուրջների մնացորդները: Կամուրջներից մեկը կործանվեց վերջերս: Այստեղ, գետի աջ ափին է գտնվում նաև հայոց Կատոսավանք սրբատեղի: Պահպանվել է 9-րդ դարի եկեղեցու ավերակը: 200-ամյա գերությունից գյուղն ազատագրվել է 1993թ. գարնանը, վերաբնակեցվել 1996-ին: Համայնքում այժմ կա 16 ընտանիք՝ 57 շնչով: Դպրոցը, որտեղ սովորում է 15 աշակերտ՝ 5 կոմպլեկտ-դասարանով և աշխատում 9 ուսուցիչ, գործում է 1997 թվականից. կա ստար լեզուների ուսուցիչ. դպրոցական շենքը գտնվում է վթարային վիճակում և ունի հիմնանորոգման կարիք, ավելի ճիշտ՝ պետք է նորը կառուցվի: Գյուղն էլեկտրաֆիկացվել է երեք

տարի առաջ, հնարավորինս բարեկարգվել է ճանապարհը, անցկացվել է հեռախոսակապ: Համայնքի երիտասարդ ղեկավար Գևորգ

պիոն դառնալ, իսկ Սամվել Մնացականյանը՝ գաղտնի գործակալ: Հայկ Հակոբյանը ցանկանում է բռնցքամարտիկ դառնալ, միաժամանակ ստեղծագործում է: Արցախյան պատերազմի ազատամարտիկ, հաշմանդամ Գենարի Հակոբյանի ընտանիքն այստեղ է եկել Վանք գյուղից, ունեն երեք երեխա, երկուսը՝ դպրոցական: Կինը՝ Սվետլանա Սահակյանը, դպրոցում դասավանդում է քիմիա և կենսաբանություն: Դպրոցի տնօրեն Արևիկ Դավթյանն ասում է, որ ութ տարի նշված առարկաները չեն դասավանդվել, և ուրախ է, որ այժմ աշակերտները կարող են սովորել կարևոր կենսաբանությունն ու քիմիան: 7-րդ և 9-րդ միացյալ դասարանում սովորում է 4 աշ-

ներ դառնալ, իսկ Լիանա Աբրահամյանը, ով արտասանեց Շիրազի «Գոսա» բանաստեղծությունը, նպատակ ունի ճանաչված դերասանուհի դառնալ: 5-րդ դասարանցի Դավիթը սիրում է բնագիտություն առարկան: 6-րդի Կարողուհի Հակոբյանը լավ է սովորում, ստեղծագործում է և ուզում է հետագայում մաթեմատիկա դասավանդել իրենց դպրոցում: Նրա համադասարանցի Նժդեհի հաշատրյանը գիտի, թե ով է Գարեգին Նժդեհը, ուրախ է, որ իրեն անվանակոչել են մեծ հայրդու անունով, և ցանկանում է հետագայում ինքը տնօրինել իրենց կրթօջախը: Դպրոցի տնօրենի դուստրն է միակ 11-րդ դասարանցի՝ Աստղիկ Սարգսյանը, ով դեռ չի որոշել իր ապագան:

Ահա թե ովքեր են Դրախտաձոր գյուղի ապագա տերերը՝ զուլալ ու մաքուր այս երեխաները, ովքեր կրթություն են ստանում ոչ բարվոք վիճակում գտնվող դպրոցում, բնակվում աշխարհից կտրված լեռնաշխարհում: Հավատում են, որ բոլորն էլ կհասնեն իրենց նպատակին: Դրախտաձորում ապրում են նաև ութ նախադպրոցական երեխաներ, որոնցից մեկը ծնվել է 2013 թվականին: Համայնքի ղեկավարը տեղեկացրեց, որ անցած տարի գյուղից հեռացել է 1 ընտանիք, վերաբնակեցվել երկուսը՝ 10 շնչով: Բնակչության հիմնական զբաղմունքը անասնապահությունը և մեղվաբուծությունն են: Ձբաղվում են նաև այգեգործությամբ, օգտվում բնության բարիքներից: Բացի նշված խնդիրներից, համայնքում պետք է կարգավորվի խմելու ջրի հարցը, բնակչությանը հատկացվի շինանյութ: Բնակիչները խնդրեցին աջակցություն նոր այգի հիմնելու նպատակով: Պատմության ուսուցիչ Արշակը հետաքրքրվեց, թե ինչպես են տեղավորվել մեր շրջանում սիրիահայերը: Բոլոր խնդիրներով հանդերձ, բնակչության հիմնական մտահոգությունը դպրոցի նոր շենք և համապատասխան մանկավարժներ ունենալն է: Նշված բոլոր խնդիրներն արձանագրվեցին, և հուսանք, ժամանակի ընթացքում լուծում կստանան:



Սարգսյանը հաշվետվությունը ներկայացրեց դպրոցում, որին բացի բնակիչներից, ներկա էին նաև շրջվարչակազմի աշխատակազմի ղեկավար Դավիթ Դավթյանը և վերաբնակեցման վարչության պետ Ռոբերտ Մաթևոսյանը: Դպրոցում դասերն ընթանում էին: Առաջին դասարանում, որը ղեկավարում է Ռուզաննա Հարությունյանը, սովորում է երկու տղա՝ Միհր Աբրահամյանն ու Հովհաննես Մնացականյանը: Սովորել էին մայրենիի դասը և լավ ընթերցեցին: Տղաները որոշել են զինվոր դառնալ: Միերը շատ վճռական ասաց, որ դառնալու է նաև ծանրամարտի աշխարհի չեմպիոն. հայրը՝ Արտակը, ծանրամարտիկ է: 3-րդ և 4-րդ միացյալ դասարանում սովորում է 3 աշակերտ: Տղաներից մեկը շախմատ էր խաղում և հաստատ որոշել է շախմատի չեմ-



պետի: 9-րդի Գրետա Քոչարյանը ցանկանում է տնտեսագետ դառնալ, իսկ Նրա եղբայրը՝ 7-րդ դասարանցի Սարգիսը՝ գյուղատնտես: Սարգիսի համադասարանցիներից Լիանա Ամիրխանյանը նկարում է, ուզում է դիզայ-

Ջ. ԸՆԹՈՑՄԱՆ

ՄԵՐ ԴՊՐՈՅԸ՝ ՓԵՏՐՎԱՐԻ ԾՆՈՒՆԴ

Հմուտ ու նվիրյալ ուսուցիչների շնորհիվ ձևավորվում էին դպրոցի կաբինետներն ու միջանցքները, դասասենյակները զարդարվում սեյակալիսն գեղեցիկ ծաղիկներով, ծառապատվում դպրոցի մերձակայքը:

Իսկ դպրոցի հոգսերով ապրող տնօրենն աշխատանք էր տանում դպրոցն անհրաժեշտ գույքով, լաբորատոր սարքավորումներով հարստացնելու ուղղությամբ: 2001թ. սովորողների ուսուցման և դաստիարակության գործում ունեցած ծանայությունների համար Վ. Դազարյանը պարգևատրվել է ԼՂՀ ԿԳ նախարարության պատվոգրով:

Մինչև 2003թ. սեպտեմբերի 1-ը դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն էր հայոց լեզվի և գրականության բազմամասնակ ուսուցիչ Ալբերտ Միքայելյանը, ով կայսի ներդրում է ունեցել դպրոցի կայացման, սովորողների հայեցի դաստիարակության նվիրական գործում:

2003թ. դպրոցի փոխտնօրեն է նշանակվում Լյուդմիլա Մարյանյանը: Վերջինիս և տնօրեն Վ. Դազարյանի համատեղ աշխատանքի տարիներին դպրոցը հասավ զգալի հաջողությունների: Նոր որակ ստացան դպրոցում կազմակերպվող միջոցառումները: Կազմակերպվեցին համաքաղաքային բաց դասեր ու միջոցառումներ, ապահովվեց աշակերտների մասնակցությունը արտադասարանական բոլոր միջոցառումներին՝ կրթական, մշակութային, մարզական:

2007թ. «Տարվա լավագույն դպ-

րոց» մրցույթի քաղաքային փուլում «Արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների լավագույն դրվածքի համար» անվանակարգում դպրոցն արժանացավ Ստեփանակերտի քաղաքապետարանի պատվոգրի:

2008թ. դպրոցի ուսուցիչների հավաքական թիմը կրթական համակարգի աշխատողների միջև վոլեյբոլի մրցումներում 3-րդ տեղը գրավելու համար պարգևատրվեց դիպլոմով: Դպրոցի աշակերտներն ակտիվորեն մասնակցում էին քաղաքային բոլոր մրցույթներին՝ արժանանալով գովասանագրերի, պատվոգրերի, թանկարժեք նվերների:

Դպրոցն ունի լավագույն ավանդույթներ. պարբերաբար նշվում են բոլոր հիշարժան տոները, կազմակերպվում նպատակասլաց, հետաքրքիր միջոցառումներ: Բարի ավանդույթ է դարձել «Ջարթոնք» մանկապատանեկան կազմակերպության խմբերի անդամների հանդիսավոր երդման արարողությունը ԼՂՀ ԱԿԱՅՄ-ի փառքի սրահում, ուր սովորողները դաստիարակվում են վեհ հայրենասիրությամբ, ուսման հանդեպ մեծ պատասխանատվությամբ:

Դպրոցի կոլեկտիվը կարևորում է աշակերտների ռազմահայրենասիրական դաստիարակության գործը, սերտ կապեր պահում շեֆ-գործանալի հետ: Հայոց բանակի կազմավորման 22-րդ տարեդարձին միջին դպրոցի աշակերտները հանդես են եկել «Քեզ համար, զինվոր» գրական-գեղարվեստական հունրային ծրագրով, որն արժանացել է

սպայական աճակազմի և զինվորների հավանությանը: Դպրոցը կարևորում է նաև աշակերտների հոգևոր դաստիարակությունը: Յուրաքանչյուր տարի կազմակերպվում է հանդիպում հոգևորական Հայր Հակոբի հետ, նշվում է Տեառնընդառաջը: Միջին օղակի աշակերտները ցուցադրում են ազգային խաղեր, կազմակերպում «Ուրախ մեկնարկներ», դպրոցի բոլոր դասարանների աշակերտների մասնակցությամբ նշվում է Ջատիկի տոնը:

Մայրաքաղաքի օրվա տոնակատարության ծրագրի շրջանակներում Դարաբաղյան շարժման տարեդարձի տոնակատարության առթիվ Մայրենիի միջազգային օրվան, ինչպես նաև Մայիսյան եռատոնին նվիրված՝ կազմակերպվում է միջոցառումների շարք՝ զեկուցումներ, շարադրություններ և ասմունքի մրցույթներ, ինտելեկտուալ խաղեր, գրական-գեղարվեստական ցերեկույթներ, վիկտորիաներ, պատի թերթերի լույս ընծայում, ցուցահանդեսներ: Անցած ուսումնական տարում 9-րդ դասարանցիները կազմակերպել են համաքաղաքային բաց դաս «Մասնագիտությունների աշխարհում» թեմայով, որը դաստիարակչական, ճանաչողական բնույթ է կրել: Հավանության արժանացած բաց դասը լուսաբանվել է «Լուսարար», «Ստեփանակերտ» թերթերում, իսկ շրջանավարտների՝ «Ինչ են ուզում դառնալ» թեմայով ստեղծագործական շարադրությունները տպագրվել են «Լուսայգ» աշակերտական թերթում:

Դպրոցն ունի անկրկնելի փառքի

սրահ, որի ձևավորման գործում իր ուրույն ձեռագիրն է թողել կերպարվեստի նախկին ուսուցիչ, ԼՂՀ նկարիչների միության անդամ Գարուն Իվանյանը: Դպրոցի ֆիզիկայի, քիմիայի լաբորատորիաները, ՆԶՊ, պատմության կաբինետները վերջին տարիներին համալրվել են համապատասխան սարքավորումներով, նյութերով, դիդակտիկ պարագաներով, ցուցապաստառներով, լրիվությամբ թարմացվել է դպրոցական գույքը: Պարապմունքներն ընթանում են միահերթ, կաբինետային կարգով: Դպրոցում գործում են բուժետ, գրադարան, որտեղ հաճախակի կազմակերպվում են տարաբնույթ միջոցառումներ, գրքի քննարկումներ: Այն ապահովված է դասագրքերով, մեթոդական ձեռնարկներով, գեղարվեստական գրքերով:

Դպրոցում աշխատում և սիրով իրենց մանկավարժական փորձը սկսանակներին են հաղորդում ուսուցչուհիներ Կարինե Դադայանը, Ջուլիետա Ալեքսանյանը, Ալվինա Բաղդասարյանը, Նարինե Գրիգորյանը, ժանետտա Ալեքսանյանը, Լիանա Ծատրյանը և ուրիշներ: Վերջինս 2007թ. նոյեմբերին ճանաչվել է տարվա լավագույն երիտասարդ ուսուցչուհի, իսկ 2008թ. ԼՂՀ ԿԳ նախարարությունում ընդհանրացվել է Լ.Ծատրյանի մանկավարժական փորձը՝ «ժամանակի հետ քայլող ուսուցիչը» վերնագրով, որտեղ տպագրվել են համակազմ դասարաններում ինտեգրակտիվ (փոխներգործում) մեթոդներով կազմակերպած դաս-նմուշներ:

Դպրոցի ուսուցիչների 60%-ը

անցել է վերապատրաստման դասընթացներ, ատեստավորվել և ստացել համապատասխան վկայականներ:

Դպրոցի շրջանավարտներից շատերը ուսուցիչներ են, ինժեներներ, բուժքույրեր, ավարտել են բարձրագույն և միջին մասնագիտական հաստատություններ, աշխատում են տարբեր բնագավառներում կամ սովորում են ԼՂՀ և ՀՀ տարբեր ուսումնական հաստատություններում:

2012-2013 ուստարվա սկզբին անց է կացվել հիմնական ջրագիծ, որով դպրոցը շուրջօրյա ապահովվել է ջրով, լրիվությամբ ավարտին է հասցվել մարզադահլիճի հիմնանորոգումը: Սակայն դրա կահավորումը, մարզագույքի ձեռքբերումը հիմնախնդիր է և խոսելով առողջ ապրելակերպի, ֆիզիկապես կրփված պատանիներ ու աղջկաներ դաստիարակելու, օրինակելի դասեր կազմակերպելու մասին՝ առանց համապատասխան միջոցների, արդյունքի չենք հասնի:

Համերաշխ ու կուռ է փոքրիկ, բայց մեծ գործի լծված Ստեփանակերտի հ. 12 հիմնական դպրոցի ուսուցչական կոլեկտիվը՝ գիտակցունով այն բանի, որ այսօրվա գերխնդիրը խաղաղության պահպանումն է, և այն համոզմամբ, որ իր դաստիարակած սերունդը Արցախ աշխարհի արժանի քաղաքացին ու պաշտպանը կլինի:

Է. ՎԱՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտի հ. 12 հիմն. դպրոցի պետ

ԳՐԱԿԱՆ

Սիրվարդ ԱՏԵՓԱՆՅԱՆ

ՄԵՐ ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐԻ ԱՏԵՂՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՅ



ՊԱՅԻ ԶԳԱՏՈՐՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒԻԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Վաղորդ, շատ վաղուց, երբ առեջների շիկնանքը բացեց...

Ու լռել...

Լռիր, երբ քեզ դրողում են խոսել, Լռիր, թե նույնը պետք է ասել...

Օ՛, Քրիստոս Աստված, Փրկիչ Լուսությունը այդ...

ԿԱՐՈՏԻ ԷՋԵՐՈՒՄ

Սիրելի ու անմոռանալի ժիրայրին

...Եվ այն պահից, երբ քո երգից արցունքներ ցած հոր...

Ես քեզ չեմ փնտրում իմ հուշերի մեջ, Քանզի քեզ համար ես անցյալ չունեմ...

Օ՛, Քրիստոս Աստված, Էլ ո՞նց չողբաս կործանումը այս, Այս մեծ աշխարհի, քարի ու սարի...

Ո՛վ է հավաքել շարանը գրերիդ, Եվ պատգամներդ ոսկեհատիկ: Արարատին թե վկա բերես...

Օ՛, Քրիստոս Աստված, Էլ ո՞նց չողբաս կործանումը այս, Այս մեծ աշխարհի, քարի ու սարի...

Օ՛, Քրիստոս Աստված, Գթա՛ ու փրկիչ լուսությունը Մեծ՝ Անմարմին ու լուռ, Թող այն ներծծվի անկշիռ ու լուռ...

Օ՛, պաշտում են քեզ, Լուսության դու ոսկե պատգամ Օգնիր ինձ քեզ սերտել օրեր, գիշերներ, Զորիզոնների քունն այդ երգով բերել

Հայացքների շոյանքից շիկնող զգացումները մեռնում է հանդարտ պտուտահողմների փոփոխների շուրթերին...

Ակամա ինձ բռնեցի շարժումների ու մտքերի նմանակման քայլերում...

ՀԱՆԴՈՒՐԾՈՒՄ

Այս անիմաստ պտուտների մեջ Քառս է շնչում ես-ը գոյացման, Նույն շնչառությամբ է հողը մարտում...

ԲԱՐՉՐ ՈՒ ՎՍԵՆ ԳԱՐԱԹԱՐՆԵՐՈՎ

Յուրաքանչյուր մարդ ունի իր կյանքի անցնելիք ճանապարհը և այն կերտում է յուրովի: Սերժանտ Արմեն Զովհաննիսյանը տիրապետում էր ազնվորեն ծառայելու վեհ արվեստին...

Վորներին՝ շեշտելով Արմեն Զովհաննիսյանի կատարած սիրամանրը: Նույնիսկ անձրևային եղանակը չխանգարեց մեր աշակերտներին իրականացնելու այն, ինչի հիմքում ընկած էր այցելության բուն նպատակը...

Արմենը կանգնած հայոց սահմանին, Խորհում էր կյանքի իմաստի մասին, Ստանում էր, թե ինչ կպատահի, Եթե իր կյանքին այսօր վերջ դրվի: Նա ակամջ դրեց իր հոգու ծայրին, Հիշեց մայրիկին, հորը, քույրիկին, Հիշեց խոստումը՝ երդումը երկրին...

Հայոց քաջերին՝ անպարտ ու խրոխտ: Հիշեց Վարդանին, Մուշեղին, Հայկին, Հասկացավ, որ սա է մեր գեներ ուժգին: Մի գեներ, որ չունի ոչ մի պետություն, Եվ որը պահում է սահմանը կանգուն: Այսպես կանգնելով քաջերի կողքին, Կռվեց նա մինչև իր շունչը վերջին:

Չորամաս-դպրոց փոխադարձ միջոցառումները և հայրենասիրական գործողությունները շարունակական բնույթ կկրեն, ու խաղաղ օրերի հերոսը, որին ձոնված է վերը նշված բանաստեղծությունը, կդառնա լեզուն՝ մեր հետագա պատմությունը սրբացնելու, պետության և բանակի բարի համբավը հավերժ պահելու համար:

ԼՈՒՍԱՐԱՐ ԻՍՐԱԳԻՐ՝ Ա. ԽԱԶՆՏՐՅԱՆ Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ Ստեփանակերտ, Գ. Թումանյան փ. 111, 94-38-99, E-mail: gorcort@mail.ru: www.lusarar.info Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում: Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպագրակ՝ 3150: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 12.02.2014թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: